

Խոյս է տեսել «Հայ լեզվաբանության տարեգրի (Annual of Armenian Linguistics)» 4-րդ՝ 1983 թ. համարը: Տարեգրի բացվում է Հայագիտական միջազգային ընկերության «Association Internationale des Etudes Arméniennes (AIEA)» կազմավորման ազդով: Ընկերության նպատակն է պրոպագանդել հայագիտությունը և միավորել աշխարհի տարբեր երկրներում գործող հայագետներին: Ընկերության առաջին հավաքը տեղի է ունեցել 1982 թ. հոկտեմբերին Վասենարում (Նիդեռլանդներ). մասնակցել են Ա. Հուլտգարդը՝ Շվեդիայից, Ֆ. Մավեն՝ Քելդիայից, Վ. Ներսիսյանը՝ Անգլիայից, Մ. Սքունը՝ Երաստրաբուլից, Ջ. Վեյտենբերգը՝ Նիդեռլանդներից: Ընկերության նախագահն է ընտրվել Մ. Սքունը, ֆարոսուղար՝ Ջ. Վեյտենբերգը: Երկրորդ հավաքը նախատեսվում է անցկացնել այս տարվա օգոստոսին՝ Լեյդենում (Նիդեռլանդներ):

Անցնելով տարեգրի բովանդակությանը՝ պետք է ասել, որ այն բավական բազմազան է և ներկայացնում է հայագիտության տարբեր բնագավառներ՝ համամասական ֆերականություն, բարբառագիտություն, ժամանակակից հայերենի կառուցվածքի ուսումնասիրություն և այլն:

Հնգվերապարանները միշտ էլ առանձնահատուկ ուշադրություն են դարձրել հնդեվրոպական բաղաձայնական համակարգի՝ հայերենում կրած փոփոխությունների ուսումնասիրությանը: Այդ հարցի վեցուկաները տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով անդրադարձել է և Գ. Զահուկյանը հայերենի պատմաճանաչման համար: Նա համարում է հայագիտության «հարկեր» չորրորդ համարում լույս է տեսել Գ. Զահուկյանի «Հայերենի սուպրաբանական կրկնականների և զուգանների մասին» հոդվածը: Խոսելով հ. - ե. բաղաձայնական համակարգի՝ հայերենում կրած փոփոխությունների մասին, նա խմբավորում է դրանք՝ առանձնացնելով փոփոխությունների մի քանի հիմնական տեսակներ. բաղաձայնների տեղաշարժ, I և II փոխանցում՝ պայթականների և պայթաշփականների համար, արտաբերման տեղի փոփոխություն, արտասանության լարվածության ուժեղացում և

բուլացում՝ շփականների և ձայնորդների համար: Բաղաձայնական կապակցությունների բնորոշ է եղել նետագա պարզեցման կամ վերախմբավորման միտումը: Նշված փոփոխությունների, ինչպես նաև այլ երևույթների ազդեցությամբ դրանց (փոփոխությունների) նետագա գործունեության սահմանափակման նուսանումը հայերենում առկա են զգալի թվով զուգաններ և թվացյալ բացառություններ, շեղումներ հնչյունական օրենքներից: Գ. Զահուկյանը իր այս հոդվածում բնութագրում է բացառապես բաղաձայնական տեղաշարժով բացառվող զուգանությունները: Օգտագործելով հայ հին և միջնադարյան գրական հուշարձանների, հին հայերենի բառարանների, հայ բարբառների ընձեռած նյութը՝ Գ. Զահուկյանը տալիս է սուպրաբանական զուգանությունների ամբողջական ցանկը, որում ընդգրկված են ոչ միայն հնդեվրոպական, այլև անսուպրաբանական բառերը: Զուգանությունները նա դասակարգում է բաղաձայնական ներքառայության տիպերի՝ ձայնեղ—խուլ, խուլ—շեշեղ խուլ և պայթական, ձայնեղ—շեշեղ խուլ և պայթական, պայթական—շփական և գրո, առաջնակարգված պայթական—տեղափոխված պայթական: Բացառելով դիրքային տարբերակներն ու պատահական համընկումները՝ նա մատնանում է սուպրաբանական զուգանությունների հետևյալ աղբյուրները. 1. բարբառներ, 2. փոխառություններ և ներքառայության ազդեցություններ, 3. հ. - ե. լեզվի տարածքային և հասարակական-գործառնական տարբերակներ և շեշտադրական առանձնահատկություններ:

Սուպրաբանական զուգաններից բացի հնդեվրոպական է նաև բաղաձայնական տեղաշարժի օրինաչափություններից շեղվող զգալի թվով բառեր:

Հոդվածում բերված փաստական հարուստ նյութը, հետաքրքիր դիտարկումները կարող են օգտակար լինել հայագետ-հնդեվրոպագետներին համար:

Հայ բարբառների շեշեղ ձայնեղների բնույթին է նվիրված Ա. Խաչատրյանի հոդվածը: Հնգվելով չորս բարբառներից՝ Մշո, Կարնո, Արարատյան և Ջեյրանի, ֆազած նյութի (600 բառ և բառակապակցություն) փորձառական հետա-

գոտոյթյան տվյալների վրա. հեղինակը գալիս է այն եզրակացոյթյան, որ հայ բարբառների շնչով ծայնեղները ըստ արտասանոյթյան պատկերների ունեն հետևյալ առանձնահատկոյթյունները. հայման պահը գրեթէ միշտ խուլ է, իսկ պայթյունը կարող է լինել ինչպես խուլ, այնպես էլ ծայնեղ: Այսպես կազմավորված հրնշյունները սովորաբար ընկալվում են որպես խուլ կամ կիսով չափ ծայնեղ: Այս դեպքում այդ բարդածայնների բնույթը որոշելու համար կարևոր է հաշտող նշյունը: Այս նկատի ունենալով էլ հեղինակը նպատակահամար է համարում շնչով ծայնեղների ուսումնասիրութունը կատարել վանկի սահմաններում:

Ժամանակակից հայ գրական լեզվի ֆերականական կառուցվածքի կազմավորման, զարգացման առանձնահատկոյթյունների ուսումնասիրության արդյունքներին է նվիրված Ն. Պառնայանի «Ժամանակակից գրական հայերենի ֆերականական կառուցվածքի զարգացման ընթացքը» հոդվածը: Եջիվով ֆերականության՝ լեզվական կառուցվածքի այլ մակարդակների ունեցած տարբերութունները և նրա զարգացման յուրահատկութունները, հեղինակը գրում է, որ ֆերականական կառուցվածքի մեկ կատարվող փոփոխութունների համար որոշիչ են լեզվական գործոններն են: Հոդվածի հեղինակն անդրադառնում է միայն ժամանակակից գրական լեզվի ֆերականական կառուցվածքի ընդհանուր, համակարգային փոփոխութուններին և զարգացման միտումներին: Կազմավորվելով Արարատյան բարբառի ճիմֆի վրա՝ այն ժառանգել էր լեզվական շատ հատկանիշներ հայ հին գրական լեզվից՝ գրաբարից. ինչպես նաև հայերենի այլ բարբառներից: Այդ պատճառով էլ արևելահայ գրական լեզուն կազմավորման շրջանում իսկ իբրև լեզվական որակ շատ հեռու էր համասեռ լինելուց: Գոյութուն ունեն գուգանեռ շատ ձևեր և անմիօրինակութուններ լեզվական կառուցվածքի գրեթէ բոլոր մակարդակներում: Եվ լեզվի զարգացումն ընթանում է այս գուգանեռ ձևերի միօրինակացման ուղղությամբ: Արևելահայ գրական լեզվի զարգացման գործընթացի հետազոտութունը կատարվում է գրվոր տեխտերի պատմական և համեմատական ֆնեությամբ, ինչպես նաև հայերենի զարգացման առանձին շրջաններին նվիրված աշխատութունների արդյունքների ուսումնասիրությամբ: Այնուհետև բերվում են 19-րդ դարի կեսերից սկսած արևելահայ գրական լեզվի ֆերականական կառուցվածքի տարբեր կողմերի՝ հոլովման, խոնարհման համակարգերի, շարահյուսական կառուցվածքի մեջ տեղ գտած փոփոխութունները, սովում է դրանց գնահատութունը լեզվի ողջ համակարգի զարգացման, կատարելագործման տեսանկյունից:

Տարեգրում տեղ են գտել մի շարք հոդվածներ, որոնցում կատարվում են բառաֆնեական և ստուգաբանական, դիտողութուններ, առա-

ջարկվում են հայերեն առանձին բառերի նոր ստուգաբանութուններ:

Հայերեն *աստուած* բառի ստուգաբանության նոր վարկած է առաջ քաշում Զ. Հիմարսունը (Ռեյկյավիկ, Իսլանդիա): Այդ բառի ծագման վերաբերյալ արտահայտվել են ամենատարբեր կարծիքներ: Մեր հին մատենագիրները այն կարծիք են «աստ էած», բառի հետ, ուման համարել են փոխառութուն պրակ. *yazd, yazdan* «առարիչ Աստուած» բառից: Ս. Բուզգեն փորձել է այն կարծիք պամփիլիական *Ἀσπένδος Σοτφεδύς*: քաղաքի անվան հետ: Հ. Անադյանը, հետևելով Ն. Մարին, այն համարում է փոխառութուն փոյուգերենից՝ կարծիքով քրակափոյուգական *ՏՅՅՅ Լուս* աստվածության անվան հետ: Մտտ հայագետներ էլ պարզապես չեն անդրադառնում այս բառի ստուգաբանությանը: Հայրենիք 1953 թ. նորից անդրադառնում է Բուզգենի ստուգաբանությունը, նշելով, որ հայ *աստուած* և պամփիլիական *Aspendos* բառերի կապը ավելի հավանական է դառնում հիբրոփիլիյան խեքերեն և փյունիկյան լեզուների *Asitawandas* ձևի (*Asitawandi* քաղաքի ճիմնագիրը) առկայությամբ, որը համապատասխանում է պամփիլիական նշված տեղանվան հետ: Փյունիկյան գուգանեռը հիմն է տալիս հաստատելու, որ հիբր. խեքերենի *Asitawandas*-ը ունի «Աստուած օրհնված» իմաստը: Հայրենիք ենթադրում է, որ *As(i)t(a)wa-f* ԵՐԼ Է և հայ. *աստուած*-ը ծագում են նույն նախանվից: *Աստուած* բառին ուրարտական ծագում է վերագրում Գ. Մելիֆիլիին՝ փոխառյալ համարելով *astiuzi* «աստված կամ աստծո պատկեր» բառից: Ուրիշ հետազոտողներ էլ, օրինակ Վ. Պիգանին, այն համարում են հ.-ե. ծագման Հայերենի հնչյութաբանությանը նվիրված իր աշխատության մեջ (1950 թ.) Վ. Պիգանին, որոշ կասկածով, հայ. *աստուած* բառը հանգեցնում է հ.-ե. **yag'i-diw-ag* «sanctus deus» արմատին: Հետազոտում նա առաջարկում է այլ ստուգաբանութուն: *Աստուած* բառը նա բաժանում է *աս-տու-ած* բաղադրիչների. *աս-*ը նույնացնում է սկր. *a'mś-a-* «մաս, բաժին», ավ.

ՀՅ՝ «մաս» բառերի հետ, *տու-*ն *տամ* բայի *տու-*հիմն է, իսկ *ած-*ը՝ վերջածանց: Հիմարսունն առարկում է Պիգանինի այս ստուգաբանության դեմ թե՛ իմաստային, թե՛ կազմության առումով: Նա առաջ է քաշում *աստուած* բառի ստուգաբանության նոր վարկած: Այդ բառը, որ ունեցել է նախնական «ստեղծող, արարիչ» իմաստը, դարձյալ համարում է բաղադրյալ կազմութուն՝ բաժանելով *ա-տու-ած* բաղադրիչների: Ան ծագած է համարում հ.-ե. *S.11-* «միասին, միատեղ» արմատից: Երկրորդ *ստու-* բաղադրիչը նա հանգեցնում է հ.-ե. **steh2-* «կանգնել, դնել» արմատին, որից ծագել է նաև հայ. ստանամ բայը: Բերելով օրինակներ այլ լեզուներից, Հիմարսունը ցույց է տալիս, որ հ.-ե. այդ արմատը կարող է ընդարձակվել՝ *ստանալով* -*ստանց* (հուն. *στένω*,

սկր. sthūnā և այլն): Եւ կանխադրում է *stow, *stu-, *stHu-նախաձևերը, որոնք երեխն էլ հայերենում կարող էին արտացոլվել իբրև *ստու-*, սակայն նախընտրությունը տալիս է *stHu-ին, քանի որ հ.-ն. լեզուներում այն վկայված է որպես անվանական հիմք, մինչդեռ *stōw-ն և *stū-ն հանդես են գալիս անած ձև-վերով: Եւ նայ. *աստուած* բառի *աստու-* մասի համար նա կանխադրում է հ.-ն. *sm-stHu- արմատը, «մեկտեղ դնել, հիմնել, ստեղծել» նշանակությամբ. *-ած* բաղադրիչն էլ հանգեցնում է հ.-ն. *ag'os-ին, այսպիսով *աստուած* բառի համար վերականգնելով հ.-ն. *sm-stHu-ag'os նախաձևը:

Հայերեն *ազրև* և *պղզեմ* բառերի ստուգաբանությունն է անդրադառնում Հ. Քեյլին (Քեմբրիջ, Անգլիա): Իր տրամադրության մասի ունենալով իրանական խոտան-Սակայի (հյուսիս-իրանյան մինչ այժմ գրիտությանն անհայտ) լեզվի բառաբերքը, նա կազմել է բառաբան, որտեղ բացի բառերի ստուգաբանություններից բերվում են ֆազլածֆենր. բառերի տարբեր նշանակությունների համար, զուգահեռ հատվածներ այլ լեզուներից: Այս նոր նյութը լրացուցիչ տեղեկություններ է պարունակում հայերենի փոխառյալ բառերի մասին: Հ. Քեյլին իրանական ծագում է վերագրում հայերեն *ազրև* և *պղզեմ* բառերին:

Խոտան-Սակայի *ysba* շեղծն, նյութը նշանակությամբ բառի համար նա վերականգնում է *azbā- < *zbā-ձևը: Հայերենում անկա է *ազրև* (սեռ. *ազրևն*, գործ. *ազրամբ*, հոգն. *ազրունք*) «գործնիք կտավի սկզբի ծաղիք» թելերը» (բաղադրյալ կազմություններում) *ազրնագող*, *ազրոց*, *ազրախումբ*) արմատը: Հայերենում և խոտան-Սակայի լեզվում պահպանված այս երկու բառերը, ըստ Քեյլիի, կարող են լույս սրբունել հ.-ն. մի պորնիսի վրա, դա *os- արմատի արտացոլման հարցն է հ.-ն. լեզուներում: Հ.-ն. նախալեզվի համար վերականգնվում է միավանկ *os-արմատը «ոսկր» և «նյութ, ոստ» նշանակությամբ: Այն վկայված է լավ. *hašša-* «ոսկր», ավ. *ah-* *anhaēna-* «ոսկր» ածականի մեջ. խոտան-Սակա՝ *ahūde* «կմախք» և *er hā* «ոսկր»: Հ.-ն. այդ արմատը տարբեր ածանցներով ու ածականներով հանդես է գալիս հ.-ն. այլ լեզուներում ևս՝ հունարենում *ὄσος* < *oz-do նյութը. գործ. *asts* հ. անգլ. *os-*, հայ. ոստ: Այս արմատից է նաև հայ. *ոսկր* բառը: Հ. Քեյլին նույն *os- արմատին է հանգեցնում նաև խոտան-Սակայի *ysba* բառը՝ շրթնային *-h(h)-* ածանցով՝ *os-h(h)- և հայ *ազր-ն-* իրանականից փոխառյալ *ա-ով*՝ ոստ-ի ո-ի դիմաց:

Ծառերի երեք անվանումներ էլ հանգում են այս նույն արմատին՝ «նյութավորված, շատ նյութի ունեցող» նշանակությամբ. դրանք են՝ լատին. *ornus* «լոնեային հացենի», կելտ. *onnen*, լիտ. *ūosis*, սլավ. *jasenī*, հայ. *հացի*: Խոտան-Սակայի *pīlirū* «դառարկ խողովակ» սրվակ, հոգնայի խողովակ» բառը հանգում է

հ.-ն. *pēl-«որի» արմատին: Հայերեն *պղզեմ* «փորել», *պղզումն* բառերը Քեյլին հանգեցնում է այս *pēl- արմատին. Լ-ր անցման համար երում է հայ. *պողովատ* -պղ. *pōlāvat ևս. մապատասխանությունները:

Ի. Դանկոֆի (Ձիկագո, ԱՄՆ) հոգվածը նվիրված է էվիլյա Չելեբիի՝ Սերաստիայի բարբառի նկարագրությանը: Քուրք ճանապարհորդ է. Չելեբին իր 10 հատորանոց «Սեյահաբ-ևս. մե» աշխատության մեջ գետեղել է համառոտ բառացանկեր 26 լեզուներից և բարբառներից: Դանկոֆը մեկը հայերեն է: Այս փաստը վրեպել է հայագետների ուշադրությունից, քանի որ Չելեբիի ճշտարակված աշխատության մեջ այն քաջ է բաղված եղել: Այն չի եղել նաև հետագա հրատարակությունների, ինչպես և «Սեյահաբ-ևս. մե»-ի Ա. Սաֆրաստյանի կատարած հայերեն բարգմանության մեջ: Վերջին տարիներին Չելեբիի աշխատությունը համեմատվել է բնագրի հետ, և պարզվել է, որ III հատորում տեղ է գտել Կենտրոնական Անատոլիայի Սերաստիա ֆազաի նկարագրությունը, որին կցված է Սերաստիայի բարբառի բառացանկ. Բառացանկը (40 բառ և արտահայտություն) կառուցված է հետևյալ ձևով. սկզբում տրվում է հայերեն բառը (գրադարձված), հետո այդ բառի տառադարձությունը, բուրբերեն նամապատասխան բառը, ապա անգլերեն բարգմանությունը: Ի. Դանկոֆը բերում է այդ ցանկը ամբողջությամբ, որն ընդգրկում է ոչ միայն առանձին բառեր (թվականներ, դերանուններ), այլև որոշ արտահայտություններ և ամբողջական նախադասություններ: Եւ նշում է, որ տառադարձությունը միասնական չէ. երբեմն դա արդյունք է հեղինակի անհետևողականության, երբեմն էլ բուրբերենի այբուբենը չի ընձեռում այդ հնարավորությունը:

Այսուամենայնիվ այս, թեկուզ և կցկտուր. տեղեկությունները Սերաստիայի բարբառի մասին հետաքրքրական են, քանի որ ներկայացնում են բարբառային նմուշներ 17-րդ դարից (Չելեբիի այցելել է Սերաստիա 1650 թ.):

Հայերենի՝ բառակազմում *յ*, *հ* ունեցող նույնարմատ բառերի մասին է Ջ. Գրեյի (Քլիվլենդ, ԱՄՆ) «Հիպերկորեկցիան հայերենում» հոգվածը: Հայտնի է, որ հայերենում կան բավական թվով բառեր, որոնք հանգելով հ.-ն. նույն արմատին, քառասկզբում ունենում են մերթ *յ*, մերթ *հ*. օրինակ՝ հայ. *յխուն*, *հիկ* բառերի *յի*, *հի*-ն հանգում են հ.-ն. *թ-ին, հայ. *յալբայ*՝ հ.-ն. *pAtw-yo, հայ. *յաղթեմ*՝ հ.-ն. *sl-t և այլն: Այսպիսով *յ*-ն կարող է ծագել թի՝ հ.-ն. *թ-ից, թի՝ *s-ից: Վերջին՝ *յաղթեմ* բառի համար Հ. Անտյանը ենթադրում է հ.-ն. *sl-t- հայ. *հաղ թեմ > *յաղթեմ* անցումը:

Չեռագայում, արդեն այն շրջանից հետո, երբ հայերեն գրերը ստեղծվել էին, տեղի է ունենում հակառակ անցումը *յ* > *ս* (*յ* և *ձայնավոր*, *հ* և *ձայնավոր*), որը վկայված է հայերեն բարբառներում՝ գրք. *յոռի-բրբռ*. *հոռի* և այլն:

Գրաբարյան յՄ կապակցությունը անփոփոխ է մնացել բարբառների մեծ մասում. որոշ բարբառներում դարձել է հ, կան բարբառներ էլ, որտեղ բառասկզբի յ-ն կամ հ-ն ընկել են: Ուրեմն յՄ > Վ անցումը ընդհանրական չի եղել. գոյություն են ունեցել մեծ թվով բացառություններ: Բառասկզբի բաղաձայնի արտասանության ամփոփանկություն է եղել մինչև այդ բառերի արտասանության կայունացումը: Եվ, հավանաբար, բառասկզբի յՄ, Վ և ՕՄ կապակցությունների շփումը, ոչ առանց հիպերկորեկցիայի միջամտության, հանգեցրել է ռեբացառելի դեպքերի, ինչպես յխուն, յարայ հինգ և հայր ձևերի կողմից և այլն): Մենք չենք կարող ճշգրտորեն ասել, գրում է ճշդիանկը, բն նախապես որ բարբառներում և երբ է դիտվել յՄ > Վ անցումը: Անվիճելի է մի բան, որ այդ անցումը կատարվել է բավական վաղ: Արդեն միջին հայերենի վաղ շրջանում նկատվում է բառերի գրության գրաբարյանից տարբեր մտայնություն: Արարական փոխառություններն էլ օգնում են պարզելու այդ երևույթի ժամանակը. այն պետք է ավարտված լիներ մինչև 8-րդ դարը:

Ներքինակր ենթադրում է, որ ձայնավորիչ առաջ գտնված դիրքում յ-ի արտասանության փոփոխություններ տեղի են ունեցել գրաբար կոչված կոյնեի ձևավորման շրջանում: Եվ արտասանական այդ շփոթության պատճառով է, որ սխալմամբ բառասկզբի յ-ն հիպերկորեկցիայի շնորհիվ կայունանում է յխուն, յարայ, յաղթեմ բառերում: Հիպերկորեկցիայի երևույթը նկատելի է նաև այլ լեզուներում. լատիներենի arena «ավազ» բառը ամենայն հավանականությամբ պիտի ունենար harena ձևը (սարիներեն fasena), Յիսուն, յարայ, յաղթեմ բառերի դեպքում յ > հ փոփոխությունը հայերենի գրով ամրագրվելու շրջանում ավարտված չի եղել: Ինչ-ինչ պատճառներով նախապատվությունը տրվել է յ-ով ձևերին:

Ջ. Գրեպինը անդրադառնում է նաև հայերեն հենում, հինում, հանում համանիշ քայերի ծագմանը: Բերելով նախորդ հայագետների կարծիքները (Հ. Հյուրշման, Ա. Մեյն, Հ. Անտոյան, Հ. Պետրսեն, Գ. Ջոլտա), նա նշում է որ դրանցից ոչ մեկը լիովին չի պարզարանում

այդ ձևերի ծագումը, հատկապես ա-ով՝ հանում ձևի առկայությունը¹:

Հենում, հինում, հանում ձևերի ծագման հարցի բննաբան կապակցությամբ Ջ. Գրեպինը անդրադառնում է հայ հին գրականության մեջ նրանց գործածության դեպքերին: Պարզվում է, որ հենում ձևը գործ է ածված միայն ներկայի հիմքից կազմված ներկա և աեկատար ժամանակներով, իսկ հանում-ը երբեք չի գործածվել ներկա և աեկատար ժամանակներով, այլ միայն երկրորդ աօրիտով (>*րո-), իսկ հինում-ը համարում է երկրորդական կազմություն, առաջացել է հինում < *հենում դերբայից:

Այսպիսով, հ. -ն. *pen- արմատի ներկայի հիմքից՝ *pen-u- առաջացել են հենում, հինում, իսկ աօրիտի հիմքից՝ *րո-՝ հանում ձևերը:

Տարեգրում տեղ են գտել նաև Ջ. Ռասելի (Կոլումբիայի համալսարան, ԱՄՆ), բանասիրական դիտողությունները հայ, ազգավատեմ բառի կապակցությամբ և հայ-հունական բառային համապատասխանությունների (հուն. πρῶτος — հայ. երաստանք) մասին է. Հեմփի (Չիկագոյի համալսարան, ԱՄՆ), ստուգաբանական ճշգրտումները:

Տարեգրի վերջում՝ գրքերի տեսության բաժնում զետեղված են գրախոսականներ հոր լույս տեսած հայագիտական գրքերի մասին: Դրանցից մասնավորապես պետք է նշել «Հին Մերձավոր Արևելի հասարակությունները և լեզուները» ժողովածուն (1982, անգլերեն), նվիրված Ի. Գյակոնովի ծննդյան 70-ամյակին, Ռ. Գոդելի «Հայ լեզվաբանություն. առժամանակյա ուսումնասիրություն» (1982, ֆրանսերեն), ինչպես նաև Եղիշի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքի (1982) Ռ. Քոմսոնի բարգմանությունը, Գ. Բունդոյանի «Արևելյան Հայաստանը պարսկական տիրապետության վերջին տասնամյակներում՝ 1807—1829 թթ.» (1982) գրքը և այլն:

Ն. ՍՄՈՆՅԱՆ

¹ Հանում-ը Հ. Անտոյանը հանգեցնում է *pen- արմատի ձայնդարձի ստորին աստիճանով *րո- ձևին: